ԾՐԱԳԻՐ

«ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՔՍԱՆՀԻՆԳԱՄՅԱ

ԵՐԵՎԱՆ 2021

I. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Գիտական Նորարարության և Կրթության Կենտրոն» հիմնադրամը (այսուհետ նաև «Հիմնադրամ») ստեղծվել է Հիմնադրամի հիմնադրման մասին միակ հիմնադրի 2021թ. մարտի 29-ի թիվ 2021-01 որոշմամբ։

Հիմնադրամի պետական գրանցման համարն է՝ 222.160.1170357, պետական գրանցման ամսաթիվը՝ 30.03.2021թ., ՀՎՀՀ՝ 00234033։

1.1. Կազմակերպության նպատակները և խնդիրները

«Գիտական Նորարարության և Կրթության Կենտրոն» հիմնադրամի նպատակներն են (ըստ Հիմնադրամի կանոնադրության).

1. Հայաստանի Հանրապետությունում գիտության, կրթության, տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտներում նորարարությունների ներդնումը և զարգացումը,
2. գիտության, կրթության, տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտներում հետազոտությունների և մշակումների իրականացումը,
3. վերոնշյալ ոլորտների մասնագետներին, կազմակերպություններիննն և այլ անձանց աջակցումը,
4. տեխնոլոգիական արդյունաբերության համար ռազմավարական գիտական ուղղությունների խթանումը և կիրառական լուծումների տրամադրումը,
5. կրթության, մասնագիտական ուսուցման և գիտական նորարարությունների զարգացումը,
6. սփյուռքի և հայաստանյան առաջատար գիտական հնարավորությունների ինտեգրումը և այլն։

1.2. Կազմակերպության գործունեության իրավական հիմքերը

«Գիտական Նորարարության և Կրթության Կենտրոն» հիմնադրամն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Գիտական Նորարարության և Կրթության Կենտրոն» հիմնադրամի 30.03.2021 թվականին հաստատված կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով։

«Գիտական Նորարարության և Կրթության Կենտրոն» Հիմնադրամի և աշխատողների միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ։

1.3. Կազմակերպությունում առկա մարդկային ռեսուրսներն են.

1. **Ղեկավար կազմ**

   1.1. Ռաֆֆի Ալպերի Պաղճեան՝ տնօրեն

   1.2. Լևոն Կառլենի Քոչարյան՝ Հոգաբարձուների Խորհրդի նախագահ

   1.3. Արա Սերոբի Թառումյան՝ Հոգաբարձուների Խորհրդի անդամ

   1.4. Հրաչյա Լևիտանի Բալայան՝ Հոգաբարձուների Խորհրդի անդամ

   1.5. Մանուկ Սևանի Շեմսյան՝ Հոգաբարձուների Խորհրդի անդամ

   1.6. Արթուր Վլադիկի Գալստյան՝ Հոգաբարձուների Խորհրդի անդամ

2. **Մշտական աշխատողներ**

   2.1. Ռաֆֆի Ալպերի Պաղճեան՝ տնօրեն

3. **Ծրանգրի համար ներգրավված անձինք**

   3.1. Լևոն Կառլենի Քոչարյան՝ ինժեներ

   3.2. Արա Սերոբի Թառումյան՝ ինժեներ

4. **Ծրագրին մասնակցող այլ անձինք**

   4.1. Զավեն Կիրակոսյան՝ ատոմային ֆիզիկոս, ծրագրի ղեկավար

   4.2. Արթին Բարսեղյան՝ էլեկտրիկ-ինժեներ, ծրագրի ղեկավար

1.4. Կազմակերպության գործունեության ոլորտը

«Գիտական Նորարարության և Կրթության Կենտրոն» հիմնադրամի գործունեության ոլորտներն են՝

1. տեխնոլոգիական արդյունաբերություն,
2. կիրառական գիտություն և կրթություն,
3. գիտահետազոտական աշխատանքների և ծրագրերի իրականացում,
4. կիրառական և գիտական փորձանմուշների մշակում։

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

2.1. Ծրագրի նպատակը

Սույն ծրագրի իրականացման համար հիմք է հանդիսացել՝

1. ժամանակակից ֆիզիկա-հետազոտական լաբորատորիայի և կենտրոնի ստեղծումը,
2. գիտության և կրթության, տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտում նորարարությունների և կիրառական լուծումների ստեղծումը,
3. կիրառական տեխնոլոգիաների արտադրության և զարգացման ոլորտում Հայաստանի Հանրապետության դերի և նշանակության բարձրացումը,
4. կիրառական գիտական ուղղությունների և տեխնոլոգիական ոլորտի զարգացումը,
5. տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտում կրթության և մասնագիտական ուսուցման խթանումը,
6. վերոգրյալ ոլորտներում սփյուռքի առաջատար մասնագետների և այլ հնարավորությունների ներգրավումը։

2.2. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական աղբյուրները

Սույն ծրագրի շրջանակներում առաջիկա 25 (քսանհինգ) տարիների համար կազմակերպության գործունեության կազմակերպման ֆինանսական աղբյուրներ են հանդիսանում.

1. «Հայ Վիրավոր Հերոսների Հիմնադրամ» (ԱՄՆ), 1-2 տարիների ընթացքում՝ 2,000,000.00 (երկու միլիոն) ԱՄՆ դոլար՝ ֆիզիկա-հետազոտական կենտրոնի վերանորոգման և կենտրոնի

գործունեության համար հաստոցների և այլ տեխնիկայի/սարքավորումների ձեռքբերման նպատակով,

2. «Գիտական Նորարարության և Կրթության Կենտրոն» հիմնադրամ, ծրագրի ամբողջ ընթացքում՝ կանխատեսվում է մոտավորապես 8,000,000.00 (ութ միլիոն) ԱՄՆ դոլար (ֆինանսավորման ստույգ չափը հայտնի չէ)՝ Հիմնադրամի կողմից ստացված նվիրատվությունների, նվիրաբերությունների և այլ հանգանակությունների հաշվին: Ֆինանսավորումը պլանավորվում է օգտագործել ֆիզիկա-հետազոտական կենտրոնի վերանորոգման, կենտրոնի գործունեության համար հաստոցների և այլ տեխնիկայի/սարքավորումների ձեռքբերման, գիտահետազոտական աշխատանքների և ծրագրերի իրականացման և փորձանմուշների մշակման համար, ինչպես նաև սույն ծրագրում ներգրավված աշխատակիցների և/կամ մասնակիցների ֆինանսավորման նպատակով:

2.3. Ծրագրի իրականացման ժամկետները

Սույն ծրագիրը նախատեսվում է իրականացնել 25 (քսանհինգ) տարիների ընթացքում:

2.4. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները

Սույն ծրագրի շրջանակներում առաջիկա 25 (քսանհինգ) տարիներին «Գիտական Նորարարության և Կրթության Կենտրոն» հիմնադրամը նախատեսում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1-ին տարվա ընթացքում՝ ֆիզիկա-հետազոտական կենտրոնի արտադրական և վարչական մասնաշենքի վերանորոգման նախագծի կազմում, ֆիզիկա-հետազոտական կենտրոնի վարչական մասնաշենքի տանիքի կառուցում և ֆիզիկա-հետազոտական կենտրոնի արտադրական մասնաշենքի տանիքի վերանորոգում, ֆիզիկա-հետազոտական կենտրոնի ամբողջ տարածքի մաքրում և բարեկարգում, ֆիզիկա-հետազոտական կենտրոնի վարչական մասնաշենքի առաջին հարկի և արտադրական մասնաշենքի մասնակի վերանորոգում և վերակառուցում, ինչպես նաև մինչև 10 (տասը) աշխատատեղի բացում,

2-րդ տարվա ընթացքում՝ ֆիզիկա-հետազոտական կենտրոնի վարչական մասնաշենքի երկրորդ հարկի վերակառուցում, ֆիզիկա-հետազոտական կենտրոնի արտադրական մասնաշենքի վերանորոգման ավարտում, ֆիզիկա-հետազոտական կենտրոնի գործունեության համար հաստոցների և այլ տեխնիկայի/սարքավորումների գնում և ներկրում, մասնավորապես՝ արդի չափիչ սարքերի, խառատային, ֆրեզերային և թվածրագրային կառավարմամբ հաստոցներ, լազերային կտրիչներ և այլն, ինչպես նաև մինչև ևս 10 (տասը) աշխատատեղի բացում,

3-րդ տարվա ընթացքում՝ ֆիզիկա-հետազոտական կենտրոնի վարչական մասնաշենքի երրորդ հարկի վերակառուցում, ֆիզիկա-հետազոտական կենտրոնի գործունեության համար հաստոցների և այլ տեխնիկայի/սարքավորումների գնում և ներկրում, մասնավորապես՝ թվածրագրային կառավարմամբ հաստոցներ և այլն, գիտահետազոտական աշխատանքների և ծրագրերի իրականացում և առաջին փորձանմուշների մշակում, ինչպես նաև մինչև ևս 5 (հինգ) աշխատատեղի բացում,

4-րդ տարվա ընթացքում՝ ֆիզիկա-հետազոտական կենտրոնի վարչական մասնաշենքի չորրորդ հարկի վերակառուցում, գիտահետազոտական աշխատանքների և ծրագրերի իրականացում և առաջին փորձանմուշների մշակում, ինչպես նաև մինչև ևս 10 (տասը) աշխատատեղի բացում,

5-25-րդ տարիների ընթացքում՝ գիտահետազոտական աշխատանքների, ծրագրերի իրականացում և փորձանմուշների շարունակական մշակում, ինչպես նաև մինչև ևս 15 (տասնհինգ) աշխատատեղի բացում:

2.5. Ծրագրի իրականացման ակնկալվող արդյունքը

Սույն ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվում է, որ «Գիտական Նորարարության և Կրթության Կենտրոն» հիմնադրամը կստեղծի ավելի քան 10,000,000.00 (տասը միլիոն) ԱՄՆ դոլար ընդհանուր արժեք ունեցող ֆիզիկա-հետազոտական կենտրոն և գիտության, կրթության և տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտում կիրականացնի գիտահետազոտական աշխատանքների իրականացում և փորձանմուշների մշակում՝ բարձրացնելով կիրառական տեխնոլոգիաների արտադրության և զարգացման ոլորտում Հայաստանի Հանրապետության դերը և նշանակությունը:

Հիմնադրամի լիազորված անձ՝ Լևոն Քոչարյան

(Կ.Տ.)